Նամակին այն կէտերը՝ որոնք կը շօշափեն ակնարկուած խնդիրը՝ իրենց համապատասխանը մեր ազգային պատմութեան մէջ հետևեալ կերպով կը գտնեն. «ի նոյն « աւուրս տակաւին ի Կոստանդինուպօլիս էր Գրիգոր Պատրիարգ Յերուսաղեմի, և « սպասէր դիպող առթի՝ առնուլ արքունուստ գիր հաստատութեան վասն տեղւոյ « սրբոյն Յակոբայ. քանզի հանապազ կասկածէր ի զրզուութենէ յունաց։ Այս նա « ինքն Գրիգոր և Յովհաննէս պատրիարգ և այլ մեծամեծք հայոց ընդ նոսա՝ միա« բանեալ դիմեցին առ դեսպանն զաղղիացւոց. և ի միջնորդելոյ նորա եկ նոր հրո« վարտակ (կամ հատուիշերիֆ) ի սուլտան Մահմուտայ վասն երից ազգաց եւս. « այսինքն հայոց, յունաց և լատինացւոց. յորում հրովարտակի հրամայիւր, զի որ « ինչ կայր ցայնժամ ի ձեռս հայոց Յերուսաղէմ, և որ ինչ ի ձեռս յունաց և « լատինացւոց, նոյնպէս մնասցէ ի ձեռս նոցա, և մի՛ փոխեսցի, և մի՛ եւս լիցի վէճ « ի վերայ այսր»[1]։

Գերապայծառի Տեառն Տեառն Մխիթարայ Աբրայիր Հօր մերոյ

.... Ընթերցեալ զթուղթսն՝ յորում ծանուցեալ էիր յազատութենէ տկարութեանդ՝ մեծապէս զփառս տուաք աստուծոյ, զի վասն մեր և վասն ազգին մերոյ տէրն մեր պահպանեալ է զգերյարգելիդ մեր։... ուրախացաք ի վերայ գեղեցկութեանց նորակերտ չինուածոց մենաստանին մերոյ, զորոց գրեալ էիր։ Տացէ տէր, զի ի կենդանութեան քում զբազում այլս մենաստանս նորակերտս տայցես կերտել, և զորդիս քոյս ի նոսա զետեղել։... զմի գիր գրեցէք առ տուզոլու յոհաննէս աղայն վասն հաստման առ ձեզ հարիւր ղուշնոց միոյ կանդեղի, զոր յղեցի ընդ մի[նի]ստրս տի զազայի հրեշտակին մերոյ....։ Գիտելի է, զի երեք ամ յառաջ սուրբ յակոբայ թուղթքն առնանեցեալք եղեն յազգէն հայոց, և տրեցան ֆռանզրզ թագաւորին. յայսմիկ ամի ձեռամբ հրեշտակին տրեցաւ հայոց մի հաթտիշերիֆ ի դրանէ տաճկաց՝ որպէս զի այնու որպէս առաջն տիրիցեն սուրբ յակոբայ. բայց առաջինք հաթտիշերիֆ մնաց ասեն մօտ ֆռանզիզ թագաւորին. և վասն այսորիկ մնացեալ ասեն ի հայոց 4000 ղուշ. և յայսմիկ ամի ասեն գրիգոր վարդապետն գնալ յերուսաղէմ։ Եւ զհրեշտակէն յոյժ գոհք են հայք. և վասն մեր ուղղափառացս ասի արարեալ զմեծ բարերարութիւնս. բայց տակաւին առ արտաքս չէ՛ բացայայտ եղեալ. և լինի թէ ըստ որում ասի՝ ի մերձակայ ժամանակի յայտնեսցի. նաև ասի թէ հրեշտակն սպասէ թղթոց թէ ի հռոմայու, և թէ ի ֆռանսայ թագաւորէն ....։ Սեռեճի գրիգորի տունն այրեցաւ. և պատճառ այրեցման եղեւ այս. զի տաճկաց զարավէլաքն յորժամ եկին ի ճերմակ ծովէն՝ մին ի նոցունց այրեցեալ եղև, և գնացեալ անկաւ ի յայեայ զաբուն, և անտի մինչև ի յենի զաբուն իսկէլէն այրեաց. և նախ քան այրեցումն տան նորա փախեաւ ևս աղախին նորա։ Վասն օրսօվայ ասային ասի, թէ յետս դարձուցանելոցք իցեն տաճկունք. և պէլկռատն ևս մնալոց է իմիրաթօռին...։ Ընդ կարմիր գլխոյն ևս սոքա հաշտութիւն արարին...։

Գերյարգութեան ձերում

Նուաստագունեղ ծառայ
ս. տ. ս. Հայր Պօղոս վարդապետ

Յամի Տեառն 1740
և յունվարի 29
[Կ. Պոլիս]

ՂԶ.

Շահեկան ծանօթութիւններով կը նկարագրուի հետագայ թուղթին մէջ Պելկրատու Մխիթարեան անբախտ քարոզչին և անոր հօտին աստանդական կեանքը։

---

1. Զամչեան, Պատմ. Հայոց. Հատոր Գ. էջ 823։